

Երևանյան անշարժ գույքի շուկան 2009թ. մայիսին

Երևանյան անշարժ գույքի շուկայում 2009թ-ի մայիսին գրանցվեց բնարանների գների “հետաքրքիր” նվազում: Հետաքրքրությունը կայացավ նրանում, որ սույն թվականի մայիսին մայրաքաղաքի համայնքներում բնակարանների գները նախորդ ամսվա համեմատությամբ նվազել են գրեթե նույն չափով՝ 5% կամ 6%-ով: Վերլուծելով բնակարանների առքուվաճառքի գործարքների արդյունքում գրանցված տվյալները՝ տեսնում ենք, որ Կենտրոն, Քանաքեռ-Զեյթուն, Նոր Նորք, Էրեբունի, Շենգավիթ և Դավթաշեն համայնքներում 2009թ.-ի մայիսին, ապրիլ ամսվա համեմատությամբ, բնակարանների գները նվազել են 5%-ով, իսկ Ավանում, Աջափնյակում և Ամալթիա-Սեբաստիայում վերջիններիս գները նվազել են 6%-ով: Առանձնացել են միայն Արաբկիր և Նուբարաշեն համայնքները. Արաբկիրում նվազումը կազմել է 3%, իսկ Նուբարաշենում մայիս ամսվա ընթացքում բնակարանների գները չեն փոփոխվել:

Համայնք	2008 Մայիս ՀՀ դրամ	2009 Մայիս ՀՀ դրամ	2009 Ապրիլ ՀՀ դրամ
Կենտրոն	477,400	461,300	485,100
Արաբկիր	416,300	354,400	366,900
Զեյթուն	307,300	274,900	289,000
Նոր Նորք	276,200	225,600	238,600
Շենգավիթ	279,300	239,000	252,000
Դավթաշեն	290,200	252,600	265,600
Մալաթիա	266,000	218,700	232,400


Վարձակալության հատուկ առաջարկներ Պիկ Ռիելթի կողմից



▲ Նորաճ, կահավորված ջրեղ բնակարան մայրաքաղաքի կենտրոնում: Այս ժամանակակից 190 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը ունի հիանալի նախագիծ: Լիովին կահավորված, լուսավոր և յուրահատուկ չորս սենյակները ջեռուցվում և օդափոխվում են: Բնակարանի հետ միասին տրվում է նաև անվտանգ ավտոկայանատեղի:



▲ Ձեր հանգիստ և հարամարավետ անկյունը Երևան քաղաքի կենտրոնում
Յուրահատուկ այս բնակարանն ունի 95 քմ ընդհանուր մակերես, ինչպես նաև ջեռուցման և օդափոխման համակարգեր, արագընթաց ինտերնետային կապ:



▲ Յուրահատուկ երկհարկանի բնակարան, որը տեղակայված է Հանրապետության Հրապարակի անմիջական հարևանությամբ: Այս ջրեղ չորսսենյականոց բնակարանն ունի 200քմ ընդհանուր մակերես, երեք սանհանգույց, ամբողջովին կահավորված է, ինչպես նաև ջեռուցվում և օդափոխվում է:

